Հայաստանի խմելու ջրի ոլորտի բարեփոխումների մասին

Ջրամատակարարման ոլորտում բարեփոխումների շարունակության սկզբունքն ամրագրված է ՀՀ կառավարության 19.05.2014թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 511-Ա որոշմամբ հաստատված կառավարության ծրագրում (2.2.8.2. կետ): 2014թ. հիմք են դրվել ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում 2-րդ սերնդի բարեփոխումը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության վերոհիշյալ ծրագրի համապատասխան պահանջներով և ջրային համակարգերի կառավարման արդյունավետության հետագա բարձրացման նպատակով, ընդունվել են ՀՀ կառավարության 14.08.2014թ. «Պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացմանն ուղղված՝ Հայաստանի խմելու ջրի ոլորտի բարեփոխումների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 883-Ն և «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպասարկվող տարածքներում պետական-մասնավոր գործընկերության ձևը և ժամկետը սահմանելու մասին» N 888-Ն որոշումները: Այդ որոշումներով սահմանվել են ՊՄԳ-ի զարգացմանն ուղղված ոլորտի բարեփոխումների կոնկրետ միջոցառումները, պատասխանատու մարմինները և ժամկետները: Սահմանվել է նաև, որ 5 ջրամատակարար ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի (որպես միասնական գույքային համալիր) օգտագործման իրավունքը 2017թ. հունվարի 1-ից, վարձակալությամբ փոխանցվում է մեկ կառավարիչի՝ 15 տարի ժամկետով: Այս գործընթացները կազմակերպելու նպատակով ՀՀ կառավարության 19.02.2015թ. N 140-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու վերաբերյալ ընդունվել է ՀՀ վարչապետի 27.04.2015թ. N309-Ն որոշումը:

2001–2015թթ. ժամանակահատվածում ՊՄԳ տվել է իր դրական արդյունքները: Ջրամատակարարման տևողությունը Երևան քաղաքում ավելացել է մոտ 3 անգամ և կազմում է օրական միջինը՝ 23 ժամ, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող տարածքում՝ ավելացել է մոտ 4 անգամ և կազմում է 17 ժամ: Կրճատվել են էլեկտրաէներգիաի ծախսը, աղբյուրներից վերցվող ջրաքանակը, ինչպես նաև կորուստները: Ապահովվում է ջրի որակը:

2015թ. ընթացքում Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) «Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր-լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակներում հաստատվել են հետևյալ փաստաթղթերը՝ Արմավիրի ենթածրագրի I փաթեթի (Օշական, Ոսկեվազ, Ոսկեհատ և Ֆերիկ համայնքներ), Տավուշի ենթածրագրի I փաթեթի (Նոյեմբերյան և Բերդավան համայնքներ) և III փաթեթի (Դիլիջան, Բագրատաշեն, Պտղավան և Ջորական համայնքների): Այդ բնակավայրերում շինարարական աշխատանքները կիրականացվեն 2015-2016թթ. ընթացքում:

2015թ. III եռամսյակում ընդհանուր առմամբ կառուցվել է շուրջ 13,8 կմ ընդհանուր երկարությամբ ջրատար, շուրջ 56,2 կմ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանց, շուրջ 28 կմ ընդհանուր երկարությամբ տնային մուտքագիծ և տեղադրվել է 3261 հատ անհատական տնային ջրաչափական հոր:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական միության համատեղ ֆինանսավորմամբ «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիր» 2012–2016թթ. վարկային ծրագրի շրջանակներում՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից 2015թ. III եռամսյակում 13 բնակավայրերում իրականացվել են ջրամատակարարմանն բարելավմանն ուղղված, այդ թվում՝ ընդհանուր առմամբ շուրջ 8,4 կմ երկարությամբ ջրատարի, շուրջ 5,0 կմ երկարությամբ կոյուղու կոլեկտորի, շուրջ 10,7 կմ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանցի, շուրջ 7,0 կմ ընդհանուր երկարությամբ տնային մուտքագծերի կառուցման և 1009 հատ անհատական ջրաչափական հորերի տեղադրման աշխատանքներ:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման KfW բանկի, Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական միության համատեղ ֆինանսավորմամբ «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր փուլ III» 2015–2018թթ վարկային ծրագրի շրջանակներում «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Նոր Ակունք» ՓԲԸ–ների կողմից առաջիկա 3 տարիների ընթացքում նախատեսվում է իրականացնել՝ նշված ընկերությունների սպասարկման տարածքներում գտնվող բնակավայրերի ջրամատակարարման ցանցերի վերանորոգման և նորերով փոխարինման, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքների համար կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման աշխատանքներ: «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ–ի կողմից նախատեսվում է աշխատանքներ իրականացնել ՀՀ Վայոց Ձորի, ՀՀ Սյունիքի և ՀՀ Գեղարքունիքի մարզերի բնակավայրերում (ներդրումը՝ 20 մլն եվրոյին համարժեք ՀՀ դրամ): «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ–ի կողմից նախատեսվում է աշխատանքներ իրականացնել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում և հարակից գյուղերում, ինչպես նաև լրացուցիչ՝ 12 բնակավայրերում (ներդրումը՝

20,76 մլն եվրոյին համարժեք ՀՀ դրամ): «Նոր Ակունք» ՓԲԸ–ի կողմից նախատեսվում է աշխատանքներ իրականացնել ընկերության սպասարկման տարածքում գտնվող բնակավայրերում (ներդրումը՝ 8,75 մլն եվրոյին համարժեք ՀՀ դրամ): Նշված աշխատանքների իրականացման համար ընդհանուր առմամբ նախատեսվում է կատարել 67,5 մլն եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

Բացի վերը թվարկված ծրագրերից, նախապատրաստման կամ բանակցային փուլում են գտնվում.

Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման KFW բանկի և Եվրոպական ներդրումային բանկի համատեղ ֆինանսավորմամբ «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ III» վարկային ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել շուրջ 73 մլն եվրոյի ներդրում, որից 17,5 մլն եվրոն նախատեսվում է դրամաշնորհի ձևով:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական միության համատեղ ֆինանսավորմամբ «Հայաստանի ջրայի ոլորտի» ներդրումային ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել շուրջ 80 մլն եվրոյի ներդրում, որից 30 մլն եվրոյի ներդրումը նախատեսվում է ՎԶԵԲ–ի կողմից, 30 մլն եվրոյի ներդրումը՝ ԵՆԲ–ի կողմից, 20 մլն եվրոյի ներդրումը՝ ԵՄ–ի կողմից՝ դրամաշնորհի ձևով:

ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե